

ЯЗЫКОВАЯ И СТИЛИСТИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ ТРАНСФОРМАЦИИ СЛОЖНОПОДЧИНЕННЫХ ПРЕДЛОЖЕНИЙ С ПРИДАТОЧНЫМ ЦЕЛИ

Р. М. Саргсян

В результате трансформации причастного оборота в сложноподчиненном предложении получается эквивалентная синтаксическая конструкция, которая делает речь более сжатой, мешает ее пролонгированности. Однако трансформация не всегда получается удачной, поэтому при трансформации или замене придаточного предложения причастным оборотом не должна страдать самостоятельность предложения и его языковая ценность.

В данной статье рассматривается трансформация сложноподчиненных предложений с придаточной частью цели.

LINGUAL AND STYLISTIC VALUE OF TRANSFORMATION OF COMPOUND FINAL CLAUSES

R. M. Sargsyan

In the result of transformation the participial phrase in compound sentences we have equivalent, syntactical structure, which makes the speech brief and correct. While every sentence cannot be transformed, that's why during the transformation the independence of the sentence and the linguistic value must not suffer.

The transformation of compound final clauses is studied in this article.

ԳՈՒՅԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ «ՈՐՏԵ՞Ղ ԷԻՐ, ՄԱՐԴ ԱՍՏԾՈՒ» ՎԵՊՈՒՄ

Ս. Ս. ԶԱՆԳԻԶՈՐՅԱՆ

*ԳՊՀ հայոց լեզու և թարգմանչական գործ մագիստրոսական ծրագրի
II կուրսի ուսանողուհի*

Ժամանակակից հայոց լեզվում կան բառեր, որոնք պարզապես ներկայացնում են որևէ իրողություն, երևույթ կամ հատկանիշ՝ առանց խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման: Սրանք լեզվի չեզոք կամ միջոճային բառաշերտ են ներկայացնում: Բայց կան նաև բառեր, որոնք, բացի անվանողական հատկանիշից, ունակ են նաև խոսողի վերաբերմունքն ու հույզերն արտահայտել: Բնականաբար թե՛ վերաբերմունքը, թե՛ հույզերը կարող են ունենալ դրական կամ բացասական երանգավորում: Ահա՝ գոեհկաբանությունները բացասական, իսկ մեղմասությունները դրական երանգավորում ունեցող բառեր են: Կարող ենք ասել, որ ինչպես ուղղական հոլովը, ածականի համեմատության դրական աստիճանը, այնպես էլ այս պարագայում միջոճային կամ չեզոք բառաշերտը սոսկ համեմատության եզր է ծառայում՝ բառերի մեջ դրական կամ բացասական վե-

րաբերմունք տեսնելու համար:

Թե՛ մեղմասությունները և թե՛ հատկապես գռեհկաբանությունները ոչ հաճախակի, այլ սակավ գործածական բառեր են և, բնականաբար, լեզվի ոչ բոլոր ոճական շերտերում են հանդես գալիս: Սրանք հիմնականում հատուկ են առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերին, եթե հրապարակախոսական ոճում կարող են, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, սակավ դեպքերում հանդես գալ, ապա գիտական և վարչաիրամայական ոճերում իսպառ բացակայում են:

Ինչ վերաբերում է գեղարվեստական գրականությանը, ապա այստեղ էլ գռեհկաբանությունների և մեղմասությունների հանդես գալը պարտադիր պայման չէ, այլ կախված է տվյալ հեղինակից և տվյալ ստեղծագործությունից, քանի որ սրանք գործածվում են իբրև արտահայտչական տարրեր՝ խոսքին հատուկ արտահայտչական երանգ տալու, խոսքը ոճավորելու կամ գեղարվեստական գրականության մեջ գործող անձանց անհատական բնութագրման համար: Ինչ վերաբերում է Ջորայր Խալափյանի «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» վեպին, ապա պետք է նշենք, որ այստեղ հեղինակը պերճախոս չէ, շատ պերճաշուք ածականների և մակդիրների հետ մեկտեղ, մեծ թիվ չեն կազմում գռեհկաբանություններն ու մեղմասությունները: Անդրադառնալով սրանց առանձին-առանձին:

Ըստ լեզվաբան Ա. Սուքիասյանի՝ գռեհկաբանություններն այն բառերն են, որոնցում կոպտության կամ արհամարհանքի երանգը չափազանց վառ կերպով է արտահայտված¹: Բացի այն, որ սրանք բառապաշարի չնչին մասն են կազմում, սակավ են նաև վեպում: Գռեհկաբանություններ հեղինակը գործածում է հիմնականում երևույթի բացասական կողմը ցույց տալու, իր սուբյեկտիվ վերաբերմունքը, ինչպես նաև հերոսների բացասական վերաբերմունքն արտահայտելու համար. օրինակ՝

«Միայն պատի ժամացույցն էր անդադրում շարժում լեզուն՝ չամփ- չամփ- չամփ, *լակում էր* ժամանակը (էջ 17)²»:

«...փողոցին նայողները արևից ձանձրացողի նման աղյուսե կարմիր *լնդերն էին բացել* (էջ 17)»:

Այս օրինակներում Խալափյանը տվյալ երևույթի վերաբերյալ իր բացասական վերաբերմունքն է արտահայտում: Եթե ընդգծված բառերը փոխարինենք չեզոք ոճավորում ունեցող բառերով, կունենանք պարզապես պատմողական նախադասություններ, որոնք ուղղակի նկարագրում են ինչ-որ իրողություն, որտեղ չկա ոճավորում և վերաբերմունք, և որտեղ բացասական ոչինչ չենք տեսնի, մինչդեռ այստեղ նկատելի է, որ հեղինակը երևույթի մեջ բացասական կողմ է տեսնում և հենց դա էլ շեշտադրում է:

Ցանկացած գործողություն հնարավոր է արտահայտել և՛ դրական, և՛ բացասական երանգով՝ նայած, թե հեղինակը ինչ վերաբերմունքով է մոտենում գործողությանը և այն կատարողին: Այսպես՝ բացասական մի հերոս մտովի խոսում և հեզմունք է մեկին՝ իր խոսքը հաճախակի համեմելով նողկալի ծիծաղով: Ահա

¹ **Ա. Սուքիասյան.** Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 169:

² Օգտագործել ենք 1983 թվականի հրատարակությունը: Պահպանել ենք հեղինակի կետադրությունը:

այդ ծիծաղը հեղինակն արտահայտում է բառերով և կարողանում է, ճիշտ բառ գտնելով, նկարագրել գռեհիկ ծիծաղը: Այսպես՝

«Ես դրան միևնույն է ոչինչ չեմ տա: Կարծում է այդ ձևով կարելի է ապրել: *խե-խե*, նայում է ինձ, սպասում է, որ ես էլ նայեմ՝ բարևի... (էջ 213)»:

Կամ՝ «Տեսքին նայես մի չոբան է: Մեջքից կռացել է, որ խղճամ, *խե-խե...* (էջ 213)»:

Կան նաև այնպիսի օրինակներ, երբ հեղինակը գռեհկաբանություն գործածում է ոչ թե որևէ երևույթ կամ գործողություն նկարագրելու համար, այլ հերոսների կողմից՝ որպես միմյանց հասցեին ուղղված վիրավորանք: Այս դեպքում գռեհկաբանությունները ծառայում են որպես հերոսին, նրա հոգեվիճակը բնութագրելու միջոց, և ինչպես Ա. Մարությանն է ասում՝ այս կարգի բառերի գործածությունը հասարակացնում է խոսքը՝ իջեցնելով փողոցի մակարդակի³: Փաստորեն սրանք նաև որոշակի միջավայր են կերտում, որովհետև, օրինակ, բժիշկների միջավայր նկարագրելիս, բնականաբար, հեղինակը գռեհկաբանությունների չի դիմում:

Դրանք հասարակ ժողովրդի առօրյա խոսքում են տեղ գտնում, հատկապես երբ հերոսները բարկացած և վրդովված են լինում. օրինակ՝

«– Սիրտս ցավում է, *շան որդի*: Ես խնամեմ, ջրեմ, թիմարեմ, կեսօրից հետո մարդ դառածը ձիս տանի դաշտի կանանց առջև չափ տա՞: Երեկվա գյաղան, ասում է, չի՞ կարող առանց ձիու ման գա (էջ 30)»:

«Հանդերի պահակ թևաթորոսը ահ է տալիս, թե կփախցնեն Անտիկին: Մերն էլ գլուխը տաք *լակոտ է*, ինքդ լավ գիտես, խանչալը շալվարի մեջ պահած է ման գալիս (էջ 42)»:

Ինչպես գիտենք, լակոտ ասում են շան ձագերին, երբ այս բառով բնութագրում են մարդուն, ստացվում է գռեհիկ վիրավորանք:

«– Ձայնդ կտրի՛ր,– հանկարծ գոռաց Սահակը, մի պահ դեմքը նրան դարձնելով: Նորան լռեց, ձեռքերը վախեցած ետ տարավ, տեսավ իրեն հառած նրա լուրջ դեմքը:– Կորիր այստեղից,– ասաց Սահակը,– իջի՛ր, *ռա՛ղ եղի՛ր* այստեղից (էջ 246)»:

Օրինակներից մեկում հեղինակը անվանում է գռեհիկ երևույթը, գործողությունը արտահայտում է բառացի, այսինքն դիմում է ձայնարկությանը, այսպես՝

«Դա մարդ չէր, նրանից միայն մի բան էին պահանջում՝ լսածը գրել, ոչ խոսել, ոչ կարծիք հայտնել, ոչ միջամտել, ոչ էլ ոմանց *դեմքին թքել* (էջ 420)»:

«Մարդ կա՝ մեքենան քշում է ուղիղ դրանց (նապաստակների) վրա: Իբր՝ ի՞նչ: Մի կիլո մսի համար: Մարդ կա չի էլ վերցնում, հենց այնպես՝ սպանեց, գնաց: Իբր՝ ի՞նչ: Իբր մարդ եմ, ուժս պատում է, կյանքդ ձեռքիս է: Գերմանացու նման մարդ: *Թյու՛* (էջ 245) »:

Ժամանակին ֆրանսիացի բանաստեղծ, կլասիցիզմի տեսաբան Նիկոլա Բուալոյի արտահայտած մտքերից մեկը, որն այժմ ասույթի արժեք է ձեռք բերել, հնչում է այսպես. «Ձայրույթը վսեմ ու վերամբարձ բառեր է պահանջում»⁴: Ցավոք, մեր իրականության մեջ ոչ միշտ է այդպես, ընդհակառակն, առավել հաճախ

³ Օգտագործել ենք՝ **Ա. Մարության**, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000, էջ 211:

⁴ Ասույթներ (կազմողներ Պ. Պ. Պետրով, Յա. Վ. Բեռլին, թարգմանիչ Ա. Ղազարյան), Երևան, 1989:

զայրույթն արտահայտվում է կոպիտ և վիրավորական բառերով ու արտահայտություններով, կամ էլ սովորական բառերը, ստանալով համապատասխան շեշտադրություն, արտահայտում են ոչ բարեհաճ խոսք: Ամեն դեպքում ծայրահեղ կոպտությունից ու արհամարանքից էլ գռեհիկ խոսք է ծնվում, ինչպես, օրինակ, վեպի հետևյալ տողերը.

«– Ի՞նչ ես առաջարկում, *բիժա*, – ասաց շրջկենտրոնից եկած անծանոթը: – Ֆերման բերենք գյուղ, թե ամենքիդ մի կով տանք: Փորներիդ ցավը հո դա չի՞ (էջ 171)»:

Բերենք այլ օրինակներ.

«Խաղում էին: «Իսթյամբիլ, – տնազեց մտքում, – բոշ խաղա, տասը սայի... *ծեր ինչն ասեմ*, երեխեք (էջ 249)»:

«*Անհծվածը*, ինչպես է ռուսերեն խոսում: Սովորել է *սրիկան* (էջ 141)»:

«– Նորից ես ուզում ինձ նկատողություն տան, – ասում է աղջիկը:

– Չէ, – Ստեփանը գլուխը թափահարում է: – Իրենց *հերն անհծած* (210)»:

Այս օրինակներում ընդգծված բառերն ու արտահայտություններն հայիոյանքի իմաստ ունեն կամ այդ իմաստով են գործածված, ուստի խոսքը իջեցնում են փողոցային մակարդակի և դառնում են գռեհկաբանություն:

Ինչ վերաբերում է մեղմասություններին, ապա սրանք հայերենի բառապաշարում մեծ մաս չեն կազմում: Սակավ են նաև վեպում: Ընդհանրապես սրանք ծառայում են խոսքում հույզերի, ապրումների, տրամադրության արտահայտմանը: Սրանք արտահայտում են փաղաքշանք, հեզմանք, արհամարհանք և այլն: Օրինակ՝

«Նա ամուսնացած է, *սիրելիս*, կինը ազգությամբ գերմանացի, բնակվում է Ավստրիայում՝ Վիեննա (էջ 121)»:

«Ով պատերազմից վերադառնում է, գեներալի բաժին է ուզում: Չէ, *սիրելիս*, մեզ մասնագետներ են պետք և ոչ թե գեներալներ, կռիվն անցավ: Ծիշտ չե՞մ ասում, *սիրելիս* (էջ 165)»:

Բերված երկու օրինակում էլ «սիրելիս» մեղմասությունը արտահայտում է ավելի շատ ոչ թե փաղաքշանք, այլ՝ հեզմանք:

Փաղաքշական մեղմասության օրինակ է հետևյալը՝ «*Տոտիկ, տոտիկ*: Նորա *տոտիկ* արա, *բալիկ* ջան (էջ 132)»:

Կամ՝ «Միքայել, վաղը սոլֆեջիո ունես, *բալիկ ջան*, ինչո՞վ ես գբաղված (էջ 162)»:

Մեղմասության օրինակներ են նաև այն դեպքերը, երբ հատուկ անվանումները գործածվում են փաղաքշական, փոքրացուցիչ մասնիկներով: Այս կերպ սովորաբար տվյալ անձին դիմում են ծանոթ, հարազատ միջավայրի ներկայացուցիչները, այստեղ, Ա. Սուքիասյանի խոսքով, ընտանեվարություն⁵ կա: Այդպիսի արտահայտությունները պաշտոնական դիմումներում, բնականաբար, բացակայում են, բնորոշ է մտերմիկ շրջապատին. օրինակ՝

«– Ռուզաննա, – հայրն էր բակից կանչում, – *Ռո՞զիկ* (էջ 35)»:

Շատ հաճախ, երկխոսության ժամանակ, մարդիկ, դիմելով իրենց ոչ ազգական իզական սեռի ներկայացուցիչների, նրանց մտերմական տոնով, փաղաքշական ձևով անվանում են «մայրիկ» կամ «քույրիկ»: Բնականաբար «մայրիկ»

⁵ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989:

անվանում են իրենցից տարիքով մեծ կնոջը, իսկ «քույրիկ»՝ հասակակից կամ կրտսեր աղջկան կամ կնոջը: Խոսքում այս կարգի բառերը ևս մեղմասություններ են դիտվում: Այդպիսի օրինակներ կան Խալափյանի վեպում: Օրինակ՝ «– Քո կենացը, *քույրիկ* (էջ 29)»:

Այսպես հեղինակը դիմում է իրեն դեռ անծանոթ աղջկա:

Կամ՝ «... Ոչ մի գործ չունեք դուք այստեղ: Գնա, գնա *մայրիկ*, խանգարում ես: Եվ գիշերն էլ չգաս, չես թողնում՝ քնի (էջ 239)»:

Բերենք ևս մեկ օրինակ՝

«Ծխում են դաշտային խոհանոցների ծխնելույզները, խոհարարը *հաստիկ* ձեռքերով թեթևորեն շարժելով կացինը՝ փայտ է ջարդում (էջ 146)»:

Այստեղ տեսնում ենք հեղինակի դրական վերաբերմունքը դեպի խոհարարը: Նկատելի է, թե մի փոքրիկ մասնիկը ինչքան մեծ երանգավորում է մտցնում խոսքում, կա բարեհաճ վերաբերմունք դեպի խոհարարը, իսկ եթե «հաստիկի» փոխարեն լիներ «հաստ» բառը, այդպիսի երանգավորում խոսքը չէր ստանա:

Ինչպես արդեն նշեցինք, թե՛ մեղմասությունները, թե՛ գռեհկաբանությունները Խալափյանի «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» վեպում սակավ են, բայց դրանք ծառայում են խոսքի ոճավորմանն ու հերոսների կերտմանը: Այս մտերմիկ, առօրյա-խոսակցական, ինչու չէ՞ նաև ցածր ոճի բառերը ևս ստեղծում են բնական միջավայր, զերծ են պահում վեպը արհեստականություններից և գրավում են ընթերցողին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Մարության**, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:
2. Ասույթներ (կազմողներ Պ. Պ. Պետրով, Յա. Վ. Բեռլին, թարգմանիչ Ա. Ղազարյան), Երևան, 1989:
3. **Ա. Սուրիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989:

ВУЛЬГАРИЗМЫ И ЭВФЕМИЗМЫ В РОМАНЕ ЗОРАЙРА ХАЛАФЯНА “ГДЕ ТЫ, БОЖИЙ ЧЕЛОВЕК”

С. С. Зангизорян

В данной статье говорится о вульгаризмах и эвфемизмах, использованных в романе Зорайра Халафяна. Как слова, употребляемые очень редко, они весьма редки и в этом произведении. Слова такого типа стилизуют речь по-своему, проявляя при этом особенности употребления, связанные с речевой ситуацией, индивидуальностью и настроением героя.

VULGARISM AND EUPHEMISM IN KHALAPYAN'S NOVEL “WHERE WERE YOU, MAN OF GOD”

S. S. Zangizoryan

The article is about vulgarism and euphemism in Z. Khalapyan's novel “Where were you, man of God”. These words are used seldom and are mentioned little in the novel. Such words stylize the speech in their own way and show peculiarities that are connected with oral situations, as well as with the mood and individuality of the hero.